

ՆՈՐ-ՆՇՈՒՋՆԻՆՏԻՈՑ ԱՐԳԻ ԿԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՌՏՆԻՆ
ԳՆՆՈՒՄԸ

Մենք մեր պատմական տեսութեան Հինգերորդ գլխում մէջ բերած աղիւսակից տեսանք, որ բոլոր Հայ գաղթականներին թիւն եղել է 12,598 Հոգի արական և իգական սեռի: Այդ թուից 11,418 Հոգին եղել են քաղաքացի, իսկ 1.180-ը գիւղացի:

Քաղաքացիներին Հետ միասին երկար ժամանակ բնակուել են քաղաքում և գիւղացիներին 15 տուն, կամենալով թողնել երկրագործութիւնը և քաղաքացի դառնալ: Սակայն այդ նոցա չի յաջողել: Ճիշդ է, նոքա մուսացի են երկրագործութիւնն ու գիւղական միւս պարապմունքները, ընտելացել են քաղաքի կեանքին, նիստ ու կացին և սկսել են քաղաքացիների պէս արհեստներով ու վաճառականութեամբ պարապել, բայց չեն կարողացել ձուլուել քաղաքացիներին Հետ և քաղաքացի կոչուել, այլ քաղաքի մէջ կազմել են մի փոքրիկ Համայնք, որ կրել է «Սաբանչի» անունը և պաշտօնական ցուցակների մէջ էլ միշտ մի ուրոյն տեղ է բռնել: 1880 թուին այդ սարանչիները, որոնք իւրեանց քաղաքում ապրելու այդքան երկար ժամանակամիջոցի ընթացքում չեն կարողացած լինում կեանքի բաւարար բարեկեցութիւն ձեռք բերել, մտածում են թողնել քաղաքը, երթալ ապրել իւրեանց Հողերի վերայ և մի առանձին գիւղ կազմել: Ահա այդ նպատակով նոքա դատ են բաց անում միւս Հայ գիւղացիների դէմ, որոնք օգտուելով Հանգամանքից, տիրապետել էին նոցա Հողերին, և տանելով գործը, իւրեանց ընտանիքներով քաշուում են քաղաքից Սամբէկ գետի ափը, որտեղ գտնուում են նոցա Հողերը, և Հիմնադրում են «Սամբէկ», կամ, ինչպէս պաշտօնապէս կոչուում է, Հայերէն—«Վատարինաւան» և ռուսերէն «Նկատերենովկա» Հայկական վեցերորդ գիւղը:

Թէ Ռուսաստանի սահմանները մտած գաղթականները ընդ-
Հանուր թուից քանի Հոգի են Հասել իւրեանց բնակութեան
Համար նշանակուած տեղերը, — մենք չենք կարող ասել, որով-
Հետեւ մեզ լայանի չէ, թէ ճիշտն է եղել կաթոլիկ Հայերի
թիւը, որոնք նորից վերադարձել են Ղրիմ, և, որ գլխաւորն
է, մեզ լայտնի չէ, թէ գաղթականներից ճիշտն է ճանա-
պարհին մեռել եւ վեճացել: Եւ որովհետեւ մենք չ'գիտենք մըշ-
տապէս բնակութիւն Հաստատած գաղթականների սկզբնական
թիւը, բնականապէս դժուարանում ենք որոշել, թէ ճիշտն և
քննադէտ է եղել և նոցա աճելութեան աստիճանն այս 120 տա-
րուայ ընթացքում: Մենք միայն կարող ենք ասել, այն էլ
Հիմք բռնելով միայն Ռուսաստանի սահմանները մտած գաղ-
թականների վերդիշեալ քանակութիւնը — 12,598 Հոգի, թէ
գաղթականների թիւն անցեալ 1780 թուից մինչև ներկայ
1900 թուականը մօտաւորապէս կրկնապակուել է ու եռապատ-
կուել է:

Այդ պարզ կերպով կարելի է տեսնել ներկայումս Նոր-Նա-
խիջեանում և նորա գիւղերում ապրող Հայերի թիւը ցոյց
տուող Հետեւեալ աղիւստ ից, ՚ի նկատի չառնելով քաղաքից
դուրս եկած և ուրիշ տեղերում բնակութիւն Հաստատած նա-
խիջեանցիներին:

Ա Ղ Ի Ի Ս Ա Կ

Բնակութեան տեղերի անունները.		Բնակիչների թիւը.			
		Երական	Իգական	տուն	Ընդհա- նուր.
1.	Մեծ Սալա	1,592	1,563	470	3,155
2.	Սուլթան-Սալա	611	552	165	1,163
3.	Թոփտի	2,516	5,250	718	4,766
4.	Չալթիբ	3,095	2,809	720	5,904
5.	Նիսուլթալ	551	567	187	1,118
6.	Կատարինաւան			287	1,50
7.	Նոր Նախիջեան				12,370

Քաղաքացւոց նոցա Ղրիմում թողած անշարժ կալուածների փոխարէն 1779 թուականի Հրովարտակով տրուել է առաջ 12 Հազար օրավար Հող, յետոյ Յովսէփ արքեպիսկոպոսի միջնորդութեամբ շնորհուել է ալ ևս 8 Հազար օրավար, ուրեմն ընդամենը—20 Հազար օրավար, իսկ գիւղացւոց իւրաքանչիւրին 1781 թուին կատարուած ընդհանուր երկրաչափութեամբ չափուած, տրուած է 30 օրավար:

Նախիջևանցւոց շնորհուած Հողերը պատկանում են Ռուսական մեծ Հարթութեան դաշտային գօտուն (степное пространство), որ իւր Հողի յատկութեամբ և գետնի ընդհանուր բնաւորութեամբ բաժանուում է երկու առանձին մասի՝ Պոնտիականի և Վասպիականի: Առաջինը, որ այդպէս է կոչուում, որովհետև բռնում է Սև ծովի Հիւսիսային ափը, ծածկուած է $\frac{1}{4}$ -ից մինչև $\frac{1}{2}$ գազ Հաստութիւն ունեցող սևաՀողի շերտով, իսկ երկրորդը, որ այդպէս է կոչուում, որովհետև բռնում է Վասպից ծովի Հիւսիսային ափը, բաղկացած է կաւաՀողից, որի վերայ գտնուած մեծաքանակ աւազը Հողմերն այս ու այն կողմը տանելով, կամ աճագին աւազակոյտեր են գոյացնում, կամ սփռում, տարածում են ամեն տեղ: Պոնտիականի սևաՀողի տակ Ռեսսարաբիայում և Քերսոնի նահանգի Հարաւային մասերում գտնուում են աւազաքար և կրաքար, Վատարինասլաւի և Տաւրիկեան ու Քերսոնի նահանգների Հիւսիսային մասերում—որձաքար և գնէյս, իսկ Դօնեցից մինչև Վօլգա գետը—կաւիճ:

Դաշտային գօտու Հողի այդպիսի կազմութեան ու յատկութեան շնորհիւ է, որ բոլոր այդ երկիրը զրկուած է միայնգամայն անտառից, որովհետև մի կողմից ծառերը չեն կարողանում խոր արմատ բռնել, միւս կողմից էլ անձրևի ջրերը չեն կարողանում ծծուել գետնի մէջ: Դեռ Հիւսիսային մասում, որի տակ գտնուում է որձաքար, բնում են, եթէ ոչ անտառներ, գոնէ, փոքրիկ պուրակներ ու ծմակներ, իսկ Հարաւային մասում, որին պատկանում են և Նախիջևանի Հողերը, այդ էլ չ'կալ, միայն տեղ-տեղ ձորակներում երևում են թփեր, մացառներ ու կարճաբուն ծառեր: Զորս կողմը, որքան մարդու

աչք բռնում է, տարածում է լալն, ընդարձակ հարթութիւնը, որ դարնանը ու աշնանը ծածկուած է լինում կանաչով, իսկ ամառն այրում, չորանում ու սևանում է:

Հողերը տրուել են նախիջևանցւոց, կամ խօսելով հրովարտակի խօսքերով, «շնորհուել են ամենից հասարակութեանց ամենաողորմածարար լաւիտենականաբար՝ ի յարդիւնս և ՚ի շահաւետութիւնս թարց ամենայնի պահանջողութեան զհարկս ՚ի դանձարանս»:

Հրովարտակի այդ խօսքերը թէ գաղթականները և թէ ինքեանք հրովարտակը գործ դնող տեղական իշխանաւորները բնականապէս այնպէս են հասկացել, թէ հողերը տրուած են իբրև սեփականութիւն մշտնջենաւորապէս, որ, ՚ի հարկէ, ուրիշ պէս չէր էլ կարող լինել, որովհետև, ինչպէս վերը նկատեցինք, հողերը տրուած էին գաղթականներին նոցա Ղրիմում թողած անշարժ կալուածների փոխարէն: Եւ այդ այդպէս էլ եղել ու ընդունուել է մինչև 1887 թուականը, երբ նոր կարգադրութիւն է եղել, որի զօրութեամբ գիւղացիք հողերին լիազօր տէր կամ սեփականատէր դառնալու համար, պարտական էին զնել (ВЫКУПАТЬ) նոցա տէրութիւնից:

Որոշուել է 40 տարի ժամանակամիջոց, որի ընթացքում գիւղացիք պէտք է վճարեն իւրեանց ձեռքին գտնուած բոլոր հողերի գինը (ВЫКУПЪ), հատուցանելով տարին ամեն մի օրավարին մի ռուբլի տասնևիօթ կոպէկ:

Քաղաքացիք պարապում են առևտրով և գործարանական արդիւնարեութեամբ: Նոքա վաճառում են գլխաւորապէս հացահատիկներ՝ ցորեն, գարի, վարսակ, վշահատիկ—«հունդ», կորեակ—«զուզու», որոնց ամբարեկու համար շինել են քաղաքում մեծամեծ շտեմարաններ, վաճառում են բուրդ, մորթի, ճարպ, որի համար պահում են բազմաթիւ «թառներ»—ոլխաւրի հօտեր, վաճառում հոն, վիրջապէս, կաշի, բամբակ և այլն: Հայերը բանեցնում են ճարպի, կաշուի, օճառի, բուրդ լուանալու ու մաքրելու, բամբակի, դդմաճի, աղիւտի և կրի գործարաններ: Հին արհեստները՝ պայտառութիւնը, դարբնութիւնը, զինագործութիւնը, թաղիքագործութիւնը, գլակագործու-

թիւներ, ատաղձագործութիւնը, դերձակութիւնը, ոսկերչութիւնը, արծաթականութիւնը, կլայկեագործութիւնը. կղմինտրագործութիւնը, հացագործութիւնը, համետագործութիւնը և միւսները համարեա թէ վերացել կամ վերանալու վերայ են, այնպէս որ կարելի է համարձակապէս ասել, թէ նախիջևանցւոց մէջ ներկայումս ոչ արհեստներ և ոչ արհեստաւորներ կան:

Գիւղացիք պարապում են զլիաւորապէս երկրագործութեամբ, կամ, ինչպէս ինքեանք ասում են, «Փողագործութեամբ»: Նոքա իւրեանց վարուցանքն անում են հողագործութեան երկդաշտեան եղանակով, այսինքն իւրեանց ձեռքին գտնուած հողերը նոքա բաժանում են երկու մասի՝ մէկը ցանում են, միւսը թողնում են հանգստանալու միւս տարուայ համար: Նոքա ունին և այնպիսի հողեր, որ ամեն տարի ցանում են. դոքա գիւղերի մօտ գտնուած դաշտերն են, որոնք աւելի պարարտ են, որովհետև գիւղի անասունները միշտ ման են գալիս, արածում են նոցա վերայ և իւրեանց սղըով պարարտացնում են նոցա:

Գիւղացւոց հողերը համայնական են և 2—; տարին մի անգամ բաժանուում են տների թէ արական և թէ իգական շնչերի վերայ. չ'բաժանուած մնում են միայն արօտատեղիները, որտեղ ամենքն էլ հաւասարապէս իրաւունք ունին քշել իւրեանց անասունները և արածեցնել, և եղեգնուտը—«զայմիշը», որտեղից եղէգն են քաղում վառելիքի համար: Հողաբաժանութեան ժամանակ տան իգական անգամները ստանում են արական անգամների ստացածների կէսը:

Հայ գիւղացիք այստեղ էլ, ինչպէս ամեն տեղ, ունին աշնանացան և գարնանացան—«Քիւղուան և Բահերուան»: Աշնանը նոքա ցանում են կարմրահատ ցորեան «օզիմկա» և հաճար—«արիշ», իսկ գարնանը ցանում են սպիտակահատ ցորեան—«հառնովկա», գարի, վարսակ և վշահատիկ: Հայերը թէև արդէն թողել են հայկական ծանր գութանը, կամ, ինչպէս ասում են ինքեանք գիւղացիները, «Հայր—Արարհամի գութանը» և վարում են թիթեւ արօրով, բայց նոքա դեռ լա-

մատուցում են ընդունելու եւրոպական կատարելագործուած բոլոր գործիքները, նոքա դեռ մինչև ցարսօր Հնձում են նաւապետական մանգաղներով ու գերանդիններով:

Գիւղացիների դաշտային պարապմունքներին շատ վնասում ու արգելք է լինում այս կողմերի կլիման իւր խստութեամբ ու փոխոխականութեամբ: Ձմեռը նոյնմընից մինչև լունուարի վերջը ցուրտն երբեմն այնքան սաստիկ է լինում, որ Հասնում է 30 աստիճանի, իսկ ամառը Յուլիին մինչև 40 աստիճան արևում և 30 աստիճան շուաքում տաքութիւն է անում: Ձիւն շատ քիչ է գալիս, բայց լանախակի բուք է անում և ձիւնախառն ցրտաշունչ քամի է փչում: Փետրուարի վերջին և Մարտի սկզբին ձմեռը վերջանում է. ձիւնն արագ հալուում է և սևահողը փափկում ու Հեղուկանման կակուղ ցիխ է դառնում, որ կտրում է ճանապարհների հաղորդակցութիւնը: Բուսականութիւնը միայն երևում է Ապրիլի սկզբին, այնպէս որ համարեա թէ դարուն չի լինում. բայց բաւական է մի քանի տաք ու պայծառ օր, որ դաշտերը կենդանան, դարձնեն և ամեն տեղ ծածկուի դալար արօտով: Որձաքարեայ ներքին շերտ ունեցող դաշտերը ծածկուում են կարճ, բայց հիւթաւէտ արօտով, իսկ կրաքարեայ և կաւճային շերտ ունեցողները սառածէնաչափ բարձր բոյսերով, ինչպէս եղէգն է, որ զործ է անում փառելիքի համար: Մայիսի 15-ից սկսուում է երաշտ ամառն իւր տաք, անտանելի փոշի բարձրացնող քամիներով, իւր դաշտային մկներով — չըթչըթներով: Գետինը չորանում, ճաղճգում է, մատղաշ բոյսերի արմատները բացուում են և խորշակի տաքութիւնից այրուում: Աշունը Սեպտեմբերից մինչև Նոյեմբերը, ըստ ամենայնի, բարեխառն է. տնձրւներ են գալիս, դաշտերը նորից կանաչում են, օդը մաքրուում ու դարնան օդի բնաւորութիւն է ստանում, այնպէս որ կարելի է ասել, թէ այս կողմերի աշունն աւելի է նմանում զարնա, քան թէ բուն դարունը: Թէ հայ գիւղերից իւրաքանչիւրն ուրքան հոգ ունի և ունեցած հողի ընդհանուր քաղակութիւնից ուրքանը յարմար է և ուրքանն անյարմար, այդ կարելի է տեսնել Հեռեկեայ աղիւսակից:

Ա Ղ Ի Ի Ս Ա Կ

Գիւղերի անունները.	Հողի քանակութիւնն օրավարի հաշուով.				
	Յաւմար.	Անյարմար.	Համար.	Ընդհանուր.	
1. Մեծ- Սալա	7,776		402	308	8,481
2. Սուլթան-Սալա	6,889	440 ք. ս.	210	86	6,425
3. Թոփաթի	15,778		272	610	16,660
4. Չալիթի	15,462		866	660	17,007
5. Նիսուրիթայ	5,889	720 ք. ս.	447	140	1,387-347 ք. ս.
6. Կատարկնաւան				500	6,500

Նախիջևանի գիւղերի պարտականացուցիչ ծախքերի քանակութիւնը տարուայ ընթացքում բաւականին մեծ է, որովհետեւ սովորական հարկերի հետ միասին նոքա հատուցանում են և վերոյիշեալ Հողերի վճարը — «ВЫКУПЪ»-ը: Թոփաթին, օրինակի համար, միայն Հողավճար հատուցանում է տարին 18,355 ռուբլի, իսկ գիւղի բոլոր տարեկան ծախքերի համազումարը հասնում է 25,632 ռուբլի խոշոր գումարին, ասել է թէ իւրաքանչիւր թոփոսեցի թէ արական և թէ իգական սեռի անհատ հատուցանում է տարին գիւղացու համար մի շատ զգալի գումար:

Գիւղերի պարտականացուցիչ ծախքերը, բացի Հողավճարից, են համայնական ծախքերը — «ВОЛОСТНЫХЪ», հասարակական — «СЕМЕСКИХЪ», շինական — «СЕЛЬСКИХЪ» և ապահովագրական — «СТРАХОВЫХЪ»:

Այդ ծախքերը լրացնում են, տուրք հաւաքելով գիւղացիների տնատեղերից, խոշոր ու մանր անասուններից, լուծքից, տների արական և իգական անդամներից և հասարակական Հողերի կապալադրամից: Հատուցանելիք հարկերի քանակութիւնը, բացի տնատեղերի տուրքից, որ ամեն տեղ ստացուում է «շուպաղալի» ամեն մի քառակուսի սաժենից $\frac{1}{2}$ կոպէկ, բոլոր գիւղերում միատեսակ ու հաւասար չէ: Մի գիւղում խոշոր անասունների՝ եզների, ձիերի և կովերի ամեն մի գլխից ստացուում է 50 կոպէկ, միւս գիւղում — 60 կոպէկ. մի գիւղում մանր անասունների՝ աքների և ոչխարների ամեն մի գլխից

խից ստացուում է 20 կ. միւսում 25 կ. կամ 40 կ. մի գիւղում լուծքից ստացուում է 32 ռուբլի, միւսում—16: Այնպիսի գիւղ էլ կայ, ինչպէս Չալթիբը, որ լուծքից հարկ չի հատուցանում, այլ տների արական և իգական անդամներից, հաշուելով արական անդամի վերայ 3 ռուբլի, իգականի վերայ 1,50: Փոքր կամ Սուլթան-Սալա գիւղը լուծքի հաստատուն հարկ չունի, այլ հարկերի մեծ մասը հատուցանում է հասարակութեան պատկանած հողերի կապալադրածից, և միայն պակասորդը լրացնում է, լուծքի վերայ հարկ դնելով 1—5 ռուբլի կամ աւելի: Նախիջևանցւոց Ղրիմից բերած հագուստի տարազը քաղաքում արդէն իսպառ վերացել է, տեղի տալով եւրոպական տարազին, իսկ գիւղերում թէ և մինչև ցայսօր դեռ պահպանուել է, բայց արդէն արագապէս սկսել է վերանալ, տեղի տալով շրջապատող ռուս գիւղացիների հագնուելու ու կապուելու ձևին:

Քաղաքում այլ ևս չ'կայ կանանց գեղեցիկ աթլաս «վրայնոցը», որ, ինչպէս ցոյց է տալիս բառի նշանակութիւնը, հագնում էին զգեստի վերայից, չ'կայ աղջիկների ոսկիներով դարդարած «ֆէսերը», մարգարտազարդ «խուլանները»—գօտիներն արծաթեայ ճարմանդով, դոհարազարդ «փերչամ-բաղին», «էթէկլու» երկու շար խոշոր ոսկիները, որ տէր-ոգորմեայի պէս խաչաձև ձգում էին վրայնոցի վերայից, չ'կայ, վերջապէս, մարգարտահոռ «գերգանյիկը» — մանեակը և մարգարտաշար ականսուկու խաչը, որ ձգում էին վիզները, չ'կայ տարազից քաղաքում ներկայումս մնացել է միայն «փօշին», որ մի մետաքսեայ հաստ նկարէն կտոր է, որին մի տեսակ գլխարկի ձև տալով, վարպետօրէն ասեղներով ամրացնելով ու մազերը նորատակ հաւաքելով, դնում կամ կապում են գլխներին Նախիջևանի պառաւները:

Գիւղերում տղամարդկանց սովորական զգեստն է «կապան», որ ձմեռը լինում է «բամբուկուն», իսկ ամառն առանց բամբակի, մորթի դրակ, շալ գօտի, պաճուճաձև գուրպաններ և հալկական տրեխներ: Կանայք սովորաբար հագնում են զոյն-զոյն պարզ ձևի շրջազգեստ-«վարի-քով», վերնազգեստ-«վերի-

քով» և գողնոց, գլխներին կապում են կամ փռել կամ թաշկինակ, իսկ մէջքները պնդում են ճիւղաւաններով: Աղջիկները հագնուում են կանանց պէս, միայն այն զանազանութեամբ, որ նոքա փռել չեն դնում գլխներին, այլ ոսկիներով զարդարած ֆէսեր, որոնց տակից ընկնում, ծածանում են ուտերի վերայ հայկական ձևով մանրաթել հիւսած մագերը, և յղջներին ձգում են ուլունքների և մանր ու խոշոր ոսկիների շարոցներ:

Հալաւների տարազի հետ միասին փոխուել ու փոխուելու վերայ է և նախիջևանցւոց «խռիմի վարքով» ապրելու եղանակը: Այլ ևս չիկայ զաղթականների նախկին կեանքի նաշապետական պարզութիւնը, պակասել է հայկական հիւրասիրութիւնը, սէրն ու «մուհարեութ», որ ստիպում էր հայերին ոչ թէ միայն իւրեանց մերձաւոր ու հեռաւոր ազգականների, խրնամիների, այլ և գրացիների, տես ու ճանաչի և մինչև իսկ «օխտն» օտար» մարդկանց հետ մօտ բարեկամութիւն ու գնալ-գալ անելու: Ներկայումս նախիջևանցւոց մէջ ամեն բան կրում է քաշուելու հեռանալու, իւր մէջ կենդրոնաւնայու ձգտումն, ամեն բան ներկուում ու կնքուում է քսականութեան դրոշմով:

Համեմատաբար դիմացկուն է եղել, անարատութեամբ է պահպանուել նախիջևանցւոց ընտանեկան կեանքն իւր ներքին կազմակերպութեամբ, իւր վարք ու բարքով, թէ և այդ վարք ու բարքի դժբից շատերն իսպառ կորցնելով իւրեանց ներքին խորհուրդը, այժմ լոկ անբովանդակ ծիսակատարութեան ու անդիտակցաբար կատարուող սովորութեան ընաւորութիւն են ստացել: Մեծ տօների ժամանակ նախիջևանցիք մինչև ցայսօր դեռ իւրեանց ծեր ու տարեց ազգականներին յարգանք մատուցանելու համար, նոցա տները «ձեռք պահնելու» են դնում. նոքա մինչև ցայսօր դեռ մի որ և իցէ տեղ իւրեանց ազգական ու ծանօթ ծերերին պատահելիս կամ տեսնելիս, անհրաժեշտ պարտականութիւն են համարում իւրեանց համար նոցա ողջունելու, նոցա ձեռքերը համբուրելով: Պատիւ ու յարգանք մատուցանելու մտքով նախիջևանցիք իւրեանց ընտանեաց անդամներին զանազան պատուանուններ են տալիս. նոքա իւրեանց մեծ եղբորը «աղա» են ասում, մեծ քրոջը — «ջիջա», տալին —

« Բէլէն », տաղաճը — « Էլէլէլ », աներոջ և զոքանչի քրոջը — « խաթնա », եղբոր ու հօրեղբոր կնոջը և առհասարակ տանտիրիկներին — « Եանկա », ծեր հօրեղբորը — « Էմֆե-բա », ծեր խրանամիներին — « խնամի-մա », « խնամի-բա », ծեր Եանկաին — « Եանկա-մա » և այլն :

« Աղա » բառը, բացի իւր բուն գործածութեան տեղից ու նշանակութիւնից, նախիջևանում գործ է դրուում և ընդհանրապէս իրրև պատուանուն բոլոր ծերերի համար, լինին դոքա պատուաւոր մարդիկ, հարուստ թէ աղքատ : Այդ, ի հարկէ, նախիջևանցոց նախկին նահապետական կեանքի մնացորդներէ, երբ ծերերի թօսքը օրէնք էր հասարակութեան համար, երբ ամեն մի ծեր մարդ առանձին պատիւ ու լարգանք էր վայելում իւր շրջապատողներէ, և երբ, վերջապէս, ծերերի խորհրդով, տնօրինութեամբ էին կառավարուում ամբողջ հասարակութեան գործերը :

Հատ հետաքրքրական է այդ « աղա » բառի գործածութեան ձևը նախիջևանցոց բարբառում. նախիջևանցիք սովորաբար ամբողջապէս նորան երբէք չեն արտասանում, այլ միշտ համարեա կրճատուած ձևով : Նոքա, օրինակի համար, չեն ասում Գրիգոր աղա, կամ Սարգիս աղա, այլ — Գրիգորն, Սարգիսն, և այլն և այլն : Դոյն կրճատման ձևին ենթարկուում են և շատ գործածական « անա », « մամա » և « բարա » բառերը. առաջինից, ինչպէս « աղա » բառը, մնում է միայն *ա* տառը, որ կայցնում են գործածուած բառի վերջից, երկրորդից ու երրորդից — միայն առաջին *ա* և *բ* ու վանկերը, ինչպէս, օրինակի համար, Մեծա, ախինքն մեծ — անա, խաթնա, ախինքն խաթուն — անա, Տէր-բա, ախինքն տէր-բարա, Հաճի-մա, ախինքն Հաճի — մամա, և այլն և այլն : Համեմատաբար աւելի անարատութեամբ է պահպանուել և նախիջևանցոց Ղրիմից բերած ուտել — խմելու ճաշակը, կերակուրների տեսակները և ընդհանրապէս սէրը դէպի խմորեղէնը և իւզոտ կերակրեղէնը, որ ընդհանուր է բոլոր հայութեան :

Արժանի են ուշադրութեան հետեւեալ հայանուն կերակուրները, որոնք իւրաքանչիւր նախիջևանցու խորտկացուցակի

մէջ անհրաժեշտ տեղ են բռնում. «Հաց—տապակ» —կաթի մէջ թրջած և իւղով, ձուով տապակած հաց, «Միս—տապակ» — տապակած միս, «Փորկից» — փորը բրնձով խճողած և փուռ դրած դառն, «Ծալճուլ» — թել բաց արած, մէջը ձիթով տապակած սոխ դրած և ծալճուած ու հիւստած խմորեղէն, «Կլորակապուր» — մսի կլորակներով ապուր, «Գունդապուր» — խմորի գնդիկներով ապուր, «Կաթկաթապուր» — իւղով տապակած և չորացրած խմորիկներով ապուր, «Կաթնապուր» — ջրալի կաթնով, «Փշուկ-ապուր», «Էրշկիք», «Ապուխտ» և այլն:

Սոցանից էլ նամանաւանդ արժանի են ուշադրութեան վերջին երկուսը — էրշկիքը և ապուխտը, որոնք պատրաստուում են իրրև ձմեռուայ պաշար աշնանը, երբ սկսում են բանել ճարպի գործարանները և բազմաթիւ «օթառներ» են մորթում ու ճարպահան արած միսը շատ էժանանում է: Էրշկիքի կամ երշիկի համար նախապէս պատրաստուում է աղիքը, այսինքն առնուում է կովի աղիքը և այնքան քերուում ու մաքրուում է, որ մնում է միայն բարակ, թափանցիկ մաշկը. յետոյ ճարպահան արած ոչխարի միսը մանրուում, ծեծուում է, մաքրուում է ջրերից ու մաշկներից, աղուում և համեմուում է չամանով, կինամոնով, միխակով, սև պղպեղով ու սխտորով, խճողուում է աղիքի մէջ և կախուում է չորանալու օդի մէջ: Ամեն երեկոյ բոլորաձև, ծայրերը միմեանց կապած երշիկներն առնուում են, զուտնակուում և միմեանց վերայ մի ծանրլ բանի տակ են դրուում, որ տախակուեն: Եւ այս այսպէս շարունակուում է, մինչև որ աղիքի մէջ խճողած միսը օդի մէջ եփուում-պատրաստուում է: Ապուխտը պատրաստուում են ոչխարի սուկիններից, թիակներից և լեզուից: Ապխտի կտորները սովորաբար առաջ լուանում, մաքրում են, յետոյ աղուում, սրխտոր ու չաման անում վերան ու կախում օդի մէջ չորանալու: Նախիջլեանցւոց ընտանեկան վարք ու բարքի մի քանի գծերի յաջող նկարագրութիւնը կարելի է տեսնել և հետևեալ երգիծարանական ոտանաւորաձև գրութեան, որ շատ անգամ է իրրև «գիվերտիսմենտ» արտասանուել Նախիջլեանի հայկական բեմից և որ հաւանականաբար շարագրութեւն է յայտնի Փա-

սուլեհեանի խմբից, որ 69—70 թուականներին Պօլսից Նախիջևան հրաւիրուած լինելով, թատրոնի է վերածել Իվան Մարկովիչ Պօպովի ցորենի ամբարը և մի ամբողջ սեզօն կանոնաւոր հաւկական ներկայացումներ է տուել այդտեղ:

Մեր դասն քովը ժողովիլին չորս-հինգ եանկա,

Կուտին բոհրուն կուտ ու թատան խուրմա,—

Մէկը տիրոնչի, մէկալը ֆալլի,

Մէկալներն ալ—գալաջի, գալաջի,

Անվերջ անհատնում սալթը գալաջի:

Զարխատա տղաք վարժատուն կեշթան,

Համբանք չեն սովորնալ, վերա կ'սաղան.

Մէկը—թռթռի, մէկալը—կոճի,

Մէկալներն ալ—գալաջի, գալաջի.

Անվերջ անհատնում սալթը գալաջի:

Զի-առապալով Ռասթով կեշթանք.

Գալու ատեն էգէր եօռուխով գտանք

Մէկ բօշ-բօղալ հայ առաքալի,—

Աշթըխ ճամբան գալաջի, գալաջի,

Անվերջ անհատնում սալթը գալաջի:

Մենք այդ ոտանաւորը լսել ենք պ. Տիրան Գալֆալեանից, որ Ֆասուլեհեանի խմբից էր և խմբի հեռանալուց լսող էլ մնացել Ռուսաստանում և ուսուցչութեամբ էր պարապում: Յաւում ենք, որ մենք զորա չորրորդ տունը, որի մէջ նկարագրուած էր Նախիջևանի կանանց ջերմեռանդութեամբ եկեղեցի լաճախելը, բայց ժամատացութիւն լսելու ու աղօթելու փոխարէն նոցա ռանկաջի անկաջի գալաջի անելու դատապարտելի սովորութիւնը, չենք կարող մէջ բերել, որովհետև մոռացել ենք, չենք մտաբերում: Նոր-Նախիջևանցուց նիստ ու կացի, կամ, ինչպէս ասում են ինքեանք Նախիջևանցիք «Ջանցան»-ի աւելի ընդարձակ նկարագրութիւնը կարելի է գտնել Ռ. Պատկանեանցի Նախիջևանի բարբառով գրուած հետաքրքրական երկերի մէջ:

Թէ քաղաքացիք և թէ գիւղացիք 'ի սկզբանէ աստի եղել են վերին աստիճանի հասարակ, պարզ նահապե-

տական կեանքով ապրող մարդիկ, աշխատասէր, խաղաղ և չափաւոր, բայց և նոյն ժամանակ վերին աստիճանի տգէտ ու գռեհիկ: Գրաբէտ մարդկանց թիւը մատնեւորվ է հաշուում եղել, ազնուականների և աստիճանաւորների թիւը շատ սահմանափակ, նոյն իսկ հոգևոր դասը խարխափում է եղել խորին տգիտութեան ու խաւարի մէջ, թէև, ՚ի հարկէ, այդ դէպքում քաղաքացւոց և գիւղացւոց մէջ մեծ զանազանութիւն է եղել: Քաղաքացիք ապրած լինելով քաղաքներում, շփուած լինելով զանազան ազգերի հետ և իւրեանց առևտրական գործերով այս ու այն կողմը գնացած լինելով, ՚ի հարկէ, համեմատաբար աւելի զարգացած, աւելի աշխարհ տեսած են եղել, քան թէ գիւղացիք, որոնք իւրեանց կեանքի պայմաններով խալառ մեկուսացած լինելով, միջոց ու հնարաւորութիւն չեն ունեցել փոքր ՚ի շատէ իւրեանց մտաւոր կրթութեան հորիզոնն ընդլայնելու, զարգացնելու:

Մեր պատմական տեսութեան գլխում յիշուած Նիսուիթալի ձեռագիր հաւաքածուի մէջ մենք գտնում ենք մի ոտանաւորաձև գրուածք Թէոդոսիոյ հոգևոր դասի մասին, որ գրել է Տէր-Ստեփանոս Թոխաթեցի երէցը նոյն իսկ գաղթականութեան ժամանակները կամ դորանից մի փոքր առաջ: Թէև արժանալիշատակ երէցը, ինչպէս երևում է, աշխատել է լիշել «Հայոց տան» հոգևորականների միայն լաւ կողմերը, աշխատել է դրուատել ու գովաբանել նոցա և իւր գրութեան հէնց այդպէս էլ կոչել է «Գովասանութիւն Վաֆայու քահանայի վերայ», բայց նորա տողերի մէջ կարելի է կարդալ, տեսնել այն խորին տգիտութիւնը, որի մէջ ընկղմուած է եղել գաղթականների ամենայառաջագէտ, ամենակրթուած դասակարգը նոցա Ռուսաստան տեղափոխուելուց առաջ: Եւ եթէ այդպէս է եղել այն դասակարգը, որ պէտք է գէպի լոյս ու ճշմարտութիւն առաջնորդէր իւր հօտը, կարելի է գիրեաւ գուշակել, թէ ինչ են եղել գաղթականների միւս դասակարգերը: Քաւական է այսքանը միայն ասել, որ Թոխաթից Թէոդոսիա եկած և տեղական քահանայական դասից օրրով Հիւրընկալուած երէցը չի կարողացել իւր «Գովասանութեան» մէջ չլիշել, թէ քա-

Հանաներից ոմանք չափազանց երկրպագու են եղել «ըրախուն և ղինոխն», ոմանք «խիստ պանպառակ, ծեր ու մասխարայ» են եղել, ոմանք էլ, փոխանակ իւրեանց սուրբ կոչման ճառայելու, պարապելուա են եղել «դուլումճուլթեամբ» — ոսկերչութեամբ և ուրիշ արհեստներով: Բայց արժէ կարդալ բոլոր «Գովատանութիւնը»:

Տէր-Խաչատուր եպիսկոպոսն,
Որպէս Անտոն թաքալիթի,
Պահող, Հսկող ճգնաւորի,
Սուրբ ծերունի, մաքուր հոգի:
Իսկ տէր Մովսէսն Ղըմեցի,
Եպիսկոպոսն գերպանծալի,
Խոնարհամիտ, Հեղահոգի,
Հրու, Հրնապանդ չամենայնի:
Եւ տէր Թորոս եպիսկոպոսն,
Որ զվանքն ունի Աստուածածնի.
Խոնարհ Հոգով, սուրբ և արհի
Եւ սիրեցեալ ալոս ամենի:
Տէր-Խաչատուր եպիսկոպոսն,
Որպէս եղբայր տէր-Թորոսին.
Քրիստոս իւրեանց մէջըն յայտնի,
Խաղաղ կենան յայսմ աշխարհի:
Տէր-Խաչատուրն սբ. Սարգիսին,
Խեղօք, խիկար, նրման ծովին,
Ջերկնից շրջանին գիտողի, —
Հայոց սուլմարն և Հրոմի:
Իսկ տէր-Յակոբն բարձրակայ,
Որ մականուամբն է ալաճայ.
Յորժամ գոռայ, զբերանն բանայ,
Քատ ոք վազեն, թէ կուլ կուտայ:
Ո՛վ տէր-Թորոս Պարթև ազգին.
Նրման Սահակ Հայրապետին,
Բարձր բոլոր մէջ ամէնի,
Աւագ երէց Կաֆայ քաղբի:

Տէր Ովանէս դու շնորհալի,
Ուրախցընող ժողովրդի,
Քաղցր և անուշ ձայնդ գովելի,
Նրման փողոյ Գաբրիէլի:
Տէր-Մըկըրտիչ դու անուանի,
Ի մէջ ամէն կարգաւորի,
Դըրոց Հմուտ ամէն բանի,
Փէնէնէհէսի եւ նրմանի:
Ո՛վ Տէր-Պետրոս դու գովելի,
ձայնդ Համեղ, փառքդ բարի,
Քաջ երաժիշտ, գեղ գովելի,
Նախաշ, ոսկող, քարտուղարի:
Տէր-Աբրահամ առատ Հացի,
Թող քո սեղանըդ շէն լինի.
Դու եւ սիրուն ամէն ազգի,
Տաճիկ, Հոմի և Ֆրանսիկի:
Աստուածատուր սբ. քահանայ,
Խիստ պանպառակ, ծեր, մասխարայ.
Եւ էլ անունդ է Հակակայ,
Հիւսն եւ նրման Հայր Յովսէփայ:
Տէր-Սգսէնտն էր փափաքելի,
Սբ. և մաքուրք քան զաղաւնի.
Պօյ ու պօսուն ձեր ցանկալի,
Անաստասայ էք նրմանի:
Տէր-մղոտսի Աստուածատուր,
Սբ. Յակոբայ եւ սպասաւոր.
Անունդ ահեղ և զօրաւոր,
Ջարմանալի և փառաւոր:

Տէր Ստեփանոս դու նորընծայ,
Եւ սբ. խաչին կարգեալ ծառայ,
Հրախուռն, գինոյն տէր հան
մեր տայ,

Աստուած քո մուրատն տայ:
Տէր Խաչատուր դու նորընծայ,
Որդիդ լինի քո քահանայ.
Սբ. Սարգիսին դու ես ծառայ,
Ջտաճարն և զգեստն մաքուր
պահեան:

Փռքոր Տէր-Աբրահամ, իմ սիրելի,
Նըման ես դու սուրբ տառարակի.
Սաղմոսասաց, սերտում արի,
Պատարագող սուրբ խորհրդի:
Քրոնաղղի Տէր-Մաղաքեայ,
Մատղոջ մանուկ դու քահանայ,
Տեսոր ալէլուք անձն քեզ կայ,
Սանբէթօին դու ծառայեան:
Տէր-Օհանէս ծեր պատուական,
Անձամբղդ մեծ թօրախալան,
Սպիտակ ալեօք, որպէս օհան,
Որ գրեաց աւետարան:

Ո՛վ Տէր-Թումայ հեզ և բարի,
Ակոր շինող և ղուլումձի,
Պօյովդ երկան աննըմանի,
Աստուած ՚ի քո հոգիդ հանգչի:
Ո՛վ Տէր-Սարգիս դու գրագիր,
Կարճ ու բոլոր, լաւ և ընտիր,
Ըռախին, գինին ՚ի կուլ տալիր,
Հանգչի հոգիդ, փառաւորիր:
Ո՛վ իմ եղբայր Տէր-Աւետիք,
Փափկամարմին և կակղղիկ,
Կաշուն աւնուլն ես գեղեցիկ,

Իւրեանց նոր հայրենիքում

Տկնիկ, փռքրիկ և սըպրկիկ:

Ո՛վ Տէր-Ներսէս չուստ և արի,
Որդի դու ծեր քահանայի,
Տըղայ գալով եղիր աչրի,

Մի համբեր տայ Աստուած քեզի:

Ով Տէր-Գրիգոր սուրբ ծերունի,
Քաղցրաբարբառ ըմպող զօթի.

Անուանակցի քո նըմանի,

Հրեշտակապետն է քո տեղի:

Գրիգոր դպիր հմուտ գրի,

Հնոց նորոց կտակարանի,

Ատենախօս մէջ ամենի,

Որ մականուամբ Մախմուր կոչի:

Քաջ Պարխուտար սերաստացի,

Ճոխ է պայծառ մէջ ամենի.

Դու ժամատէր հեղահոգի,

Մեզք և անցանք քո ջրեջի:

Քներ այսմատուրքն ետաք ընձի,

Որ զօրինական գրեցի.

Լոյս ճագեցի մեր տաճարի,

Լուսով մտնունք յառազաստի:

Տէր-Ստեփանոսը թօխատացի,

Եկի, հանգեայ ձեր քաղաքի,

Առ ոտն սուրբ Լուսաւորչի,

Ծովահայեաց սուրբ տաճարի:

Տունըն ձեր նըման Աբրահամի,

Սուրբ Սահակայ և Ակորի,

Պանդխտաւէր հանգիստ Հիւրի,

Նժդեհ, դարիւղ և օտարի:

Ես մեղաւորս և եղկելի

Լոկ Ստեփանոս թօխաթեցի,

Հալարտ և լիրբ և փառասէր,

Այ ամենայն այգով ելի:

Ել զաթականները դեռ շատ

երկար ժամանակ մնում են նոյն տգիտութեան մէջ, որովհետեւ ոչ նոցա նոր բնակութեան տեղը, ոչ էլ Հանգամանքներն են նպաստում նոցա շուտով լուսաւորուելու, կրթուելու: Նախիջևանի շրջակայքը Հին ժամանակները շրջապատուած էր բն-դարձակ ամալի դաշտերով և կամ դազախների գիւղերով, որոնք ինքեանք էլ վերին աստիճանի գեղեցիկ լինելով, 'ի Հարկէ, չէին կարող կրթիչ ազդեցութիւն ունենալ Հայերի վերայ: Նախիջևանում էլ չի կարելի լինում իսկոյն դպրոցներ Հաստատել և գաղթականների մէջ կրթութիւն տարածել, որովհետեւ մի կողմից նիւթական միջոցների խիստ սղութիւն է լինում, միւս կողմից էլ կրթութեամբ, դաստիարակութեամբ մարդկանց պակասութիւն: Ճիշդ է, քաղաքի և գիւղերի Հիմնադիր Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը մտածում է այդ բանի մասին և աշխատում է մի մեծ դպրոց—«Համալսարան» բանալ, բայց չի յաջողում: Նա թէև կարողանում է քաղաքում մի փոքրիկ դպրոց բանալ Հայերէն և ռուսերէն գրագիտութիւն սովորեցնելու Համար և վանքում մի փոքրիկ վանական դպրոց է Հաստատում Հոգևորականներ և եկեղեցական պաշտօնեաներ պատրաստելու Համար, բայց դժբա էլ, նորա Հեռանալուց լետոյ, շուտով փակուում են և ժողովրդի կրթութեան գործը մնում է երկար ժամանակ տգէտ քահանաների և տիրացուների ձեռքին, որոնք միայն պարզ Հայերէն գրագիտութիւն և եկեղեցական փոխասացութիւն են սովորեցնում խալֆայական եղանակով:

Առաջին Հայոց կանոնաւոր դպրոցները Նախիջևանում Հաստատուում են 1868 թուին, երբ երջանկայիշատակ Գէորգ կաթողիկոսը իւր դէպի Պետերբուրգ արած ճանապարհորդութեան ժամանակ մտնում է Նախիջևան և մի քանի օր մնում է այդտեղ: Ուսումնասէր կաթողիկոսի Հրամանով առաջին անգամ բացուում են քաղաքի ծխական դպրոցները, Ս. Խաչի ժառանգաւորաց դպրոցը և գիւղերի ծխական դպրոցները: Այնուհետև 1875 թուին Հիմնարկուում է Նախիջևանի Հոգևոր դպրոցը, որ 1881 թուին վերածուում է թեմական դպրանո-

ցի. 1881 թուին բացուում է Արհեստաւորաց դպրոցը քաղաքի հարիւրամեակը յաւելրժացնելու համար. նոյն 1881 թուին բացուում են Գողգոթան և Հռիփսիմեան օրիորդաց դպրոցները: Սակայն 'ի նկատի առնելով, որ դեռ շատ ժամանակ է անցնում, մինչև որ այդ բոլոր դպրոցները կանոնաւորուում են, 'ի նկատի առնելով, որ դռքա կանոնաւորուելուց յետոյ էլ դեռ շատ անգամ փոփոխական բաղդի են հանդիպում, դռքա չեն կարողանում հարկաւոր ազդեցութիւնն անել գաղթականների վերայ և հանել նոցա տգիտութեան այն թանձր խաւարից, որի մէջ նոքա այնքան երկար ժամանակ մնացել էին: Ահա հէնց այդ իսկ պատճառով էլ մինչև ցայսօր դեռ բոլոր գիւղացիները և քաղաքի աղքատ դասակարգը յարատեւում են տգիտութեան մէջ, զրկուած մնալով ժամանակիս հոգուն և հանգամանքներին համապատասխան կրթութիւնից:

Աիշդ է, քաղաքում ներկայումս գոյութիւն ունի արքունի միջնակարգ և բարձրագոյն դպրոցներից աւարտած ու դուրս եկած մի ստուար դասակարգ, բայց դա բաղկացած է մեծամասնութեամբ առանց իդէալի, առանց մի որոշ սկզբունքի մարդկանցից, որոնք, բացի իւրեանց սեպհական շահերից, ոչինչ չեն հասկանում, ոչինչ չեն ուզում իմանալ, որոնք իւրեանց քթից հեռու չեն տեսնում... իսկ գործելու, անելու շատ բան կայ, որովհետև քաղաքում հայկական կեանքը մտնելու վերայ, գիւղերին էլ ապագայում նոյն վիճակն է սպասում: Ժողովուրդն աղքատացել է և հէնց այդ պատճառով էլ քաղաքացիների մի ստուար մասը թողել, շրջուել է շրջակայ գիւղերն ու քաղաքները և շատ հեռու չէ այն ժամանակը, որ քաղաքը բոլորովին դատարկուի իւր հայ տարրից. գիւղերին էլ, 'ի հարկէ, աւելի հեռու ապագայում, նոյն վիճակն է պատրաստուում: Վարքի ու բարքի ապականութիւնը բոյն է դրել քաղաքի հայ Հասարակութեան զանազան խաւերում, մերձաւոր ամուսնութիւնները յաճախակի են տեղի ունենում, տարեցտարի աւելանում է խառն ամուսնութիւնների թիւը և ժողովրդի մանրանալուց, թուլամիտների, խենթերի, թլուաւորների թուի բազմանալուց, կամքի կորուլի և բարոյական ոյժե-

րի թուլանալուց կարելի է ակներև դուշակել, որ դադթականներն արագորէն ալլաեռուում են: Գիւղերում նահապետականութիւնը հետզհետէ վերանում է և Ռոստովի փողոցներից «փողոցային կուլտուրան» լայն հոսանքներով տարածուում է գիւղերը և մտնում, բոլն դնում գիւղացիների համեստ տնակներում ու խրճիթներում:

Նախիջևանցուց խօսակցութեան լեզուն, որ Տաճկահայոց մեծ բարբառի ճիւղաւորութիւններից մէկն է և ունի Հայոց բարբառներին յատուկ բոլոր առաւելութիւններն ու պակասութիւնները, քաղաքում արդէն վերանալու վերայ է, որովհետև մատաղ սերունդն արդէն համարեալ թէ չի խօսում Հայերէն, իսկ Հին սերնդի բերանում նա կորցրել է անկախ, ինքնուրոյն լեզուի բոլոր յատկութիւնները և դարձել է մի կոպիտ փողոցային «ժառգոն», որով ոչ մի կապակցական խօսակցութիւն չի կարող լինել, ոչ մի բնդարձակ վերացական միտք չի կարելի յայտնել: Նորա մէջ աւելի շատ թաթար և ռուս բառ կայ, քան թէ Հայերէն, նորա մէջ շատ ոճեր և միջև անդամ ամբողջ նախադասութիւններ ռուս լեզուով են արտայայտուում, այնպէս որ օտար, անծանօթ և առհասարակ այդ ժառգոնին անընտել մարդիկ առաջին նուազ շատ անգամ կ'ըժտւարանան հասկանալ, թէ իսկապէս ինչ լեզուով է կատարուում երկու նախիջևանցու մէջ եղած զրոյցը — ռուսերէն, թէ Հայերէն: Զատ հեռու դնացած չենք լինել ճշմարտութիւնից շատ չափազանցացրած չենք լինել, եթէ ասենք, թէ այժմուայ նախիջևանցուց խօսակցութեան լեզուն մի թաթար և ռուս լեզուներից առնուած ու աղճատուած բառերի, ոճերի ու նախադասութիւնների խառնուրդ է կապուած Հայ շաղկապներով և օժանդակ բայերով, համեմուած սակաւթիւ Հայ բայերով և գոյականներով: Գիւղացուց լեզուն շնորհիւ նոցա մեկուսացած կեանքին և անխառն բնականութեան տեղերին համեմատաբար աւելի անարատ է մնացել, բայց գիւղերում ևս արդէն սկսել է խրամատուել լեզուի ինքնուրոյնութեան ցանկը և հետզհետէ քաղաքի ժառգոնի բնաւորութիւնն ընդունել:

Նախիջևանի բարբառի առանձնայատկութիւններից ար-

Ժանի են առանձին ուշադրութեան ը տառի Հնչիւնաբանութիւնը և յ տառի յաճախ գործածութիւնը: Նախիջևանցութեանում ը տառը երբէք չի Հնչում իբրև մաքուր ը, այլ մերթ իբրև Ժ, մերթ իբրև շ: Նախիջևանցին, օրինակի Համար, չի ասում «երեք», այլ անպատճառ «իփեք», չի ասում «մարդ», այլ անպատճառ «մաշթ»: Ե տառը, բացի իւր սովորական գործածութեան տեղերից, գործ է ածուում և ա երբեմն և օ ձայնաւորներից յետոյ, լինին գոքա դրուած բառի սկզբում, միջում և թէ վերջում: Նախիջևանցիք չեն դրում «վաճառական», այլ «վաճայական», չեն ասում «հօր», «մօր», այլ անպատճառ «հօյր» մօյր» և այլն:

Մեր ձեռքին գտնուում է պաշտօնական թղթի վերայ Հայերէն գրուած մի Հին պարտամուրհակ, որի մէջ պարզ կերպով աչքի է ընկնում յ տառի յաճախ գործածութիւնը: «Ինը այմիս Համարելով, գրուած է դորա մէջ, յայտ թուին Հաղար օւթըն Հարուր տասն մէկէն այմիսեանն սէկտէնրէրի քսան իփէքէն այս իմոյ Հատուկ վէքսելայգրովս պարտական եմ ես Հատուցանել նախիջևանցի վաճայական Ադրին Պարօնովին ևս կամ 'ի նմանէ օւս որ Հրամանեալ ելի տալ նմայ ռուստի քալական ըող Հաղար ռուպլի վէքսիլ տուվօղս եմ նախիջևանցի Լուսեղէն Հաճիօվ պարտիմ»:

Բաղաձայների տառադարձութեան կանոնները ճիշդ Համաձայն են արեւմտեան Հայերի արտաբերութեան: Նախիջևանցութեանում չի զանազանում Հայոց երեք տեսակ բաղաձայների Հնչիւնաբանութեան նրբութիւնների տարբերութիւնը. նորա Համար պ, բ, փ բաղաձայները մի տեսակ ձայն ունին, ինչպէս և մի տեսակ ձայն են Հանում նորա ականջին և կ, գ և ք, տ, դ, և թ, ծ, ց և ձ, ճ, չ և ջ բաղաձայները և միւսները: Նախիջևանի բարբառը միատեսակութիւն չունի. նորա քերականական կանոնները զանազան գերդաստաններ զանազան տեսակ են գործ ածում: Մի ընտանիք, օրինակի Համար, ասում է «տուրից», միւսը — «տուլից», մինը — «այալի», միւսը — «սորամիլ», մինը — «տուիկը», ադուիկը, անուիկը, միւսը — «ս», «դ», «ն», մինը — «վոր», «վոր», «վոր», միւսը — «սոր», «դոր»,

անոր, և այլն և այլն: Այդ վերջին Հանգամանքը մեկնուում է նորանով, որ Ղրիմի գաղթականութեան մէջ եղել են Հայաստանի զանազան նահանգներ, գաւառների, քաղաքների և առհասարակ զանազան տեղերի գաղթականներ: Մինչև ցայսօր դեռ. Նախիջևանում լիշուում են Տրապիզոնցեան, Բայրուրդեան, Իգմալիցեան, Օրցեան, Ակսայցեան, Քերմանցեան, Թամանցեան և այլն ազգանուններով ընտանիքներ, որոնք, ՚ի Հարկէ, իւրեանց ազգանունները ստացել են իւրեանց ընտելութեան նախկին տեղերից: Նախիջևանի ժառգոնի տպագրուած օրինակներ չ'իկան, որովհետեւ ու որ նախիջևանցիները միտք է լղանում մի որ և իցէ բան գրելու Նախիջևանի բարբառով, նա անպատճառ գրում է, նախապէս մաքրելով նորան եկամուտ և օտար ռճերից և բառերից: Իբրեւ Նախիջևանի Հին, մաքուր բարբառի օրինակ կարող են ծառայել Հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանցի բարբառով գրուածները, նամանաւանդ նորա Հին Քերովրէ Պատկանեանցի Հայոց բարբառների Հաւաքածոների առաջին Հատորում տպագրուածները — «Չախու», «Արէլ—Մանուկին Հէքիաթը» «Էրէվան» «Պաց ազգաբառ»:

Նախիջևանցիք ՚ի սկզբանէ անտի կառավարուել են Հոգևոր դատարանով և Հայկական Մագիստրատով, որոնք Հիմնուած են եղել այն արտօնութեան Հրովարտակի Հիման վերայ, որ շնորհել է նոցա երջանկայիշատակ Ակատարինէ: Կայսերուհին 1779 թուին: Հոգևոր դատարանով կառավարուել են գաղթականների Հոգևոր գործերը, Մագիստրատով—նոցա աշխարհական գործերը: Հոգևոր դատարանը իւր առանձին կազմակերպութեամբ գոյութիւն է ունեցել մինչև 1836 թուականը, իսկ Մագիստրատը գործել է մինչև 1859—60 թուականները: Առաջինը, որ կազմակերպուած է եղել Յովսէփ Արղութեանի մշակած կանոնադրութեան Հիման վերայ, վերածուել է ներկայումս Նախիջևանում գոյութիւն ունեցող «Նախիջևանի Հայոց Հոգւոր կառավարութեան», երբ Հրատարակուել է Հայոց եկեղեցու գործերը կառավարելու Համար մշակուած կայսերա-Հաստատ «Պօլօթենիա»-ն, իսկ երկրորդը, որ բաղկացած է եղել Ոստիկանական, Դատաստանական և Քաղաքային կառավարու-

Թեան կամ «Դումի» մասերից, վերածուել է «ընդհանուր դրու-
թեան» Հետզհետեւ և աստիճանաբար: Առաջ առնուել է գաղ-
թականներից նոցա իւրեանց Համար առանձին տեղական ոս-
տիկանութիւն ունենալու արտօնութիւնը, յետոյ առանձին Հայ-
կական դատարան և քաղաքային դումա ունենալու իրաւուն-
քը: Քաղաքն ենթակուել է Ռոստովի ոստիկանութեան իրա-
ւասութեան. Համարուելով նորա Հինգերորդ և վեցերորդ ոստի-
կանական մասերը, իսկ գիւղերն ենթարկուել են նահանգական
ընդհանուր ոստիկանութեան Հսկողութեան, կառավարուելով
«Ջասեղատեղներով» և «Ատամաններով»: Հայկական դատա-
րանն տեղի է տուել Ալեքսանդր երկրորդի Հաստատած նոր
դատարաններին, իսկ Հայկական քաղաքային դումին փոխա-
նակել է ներկայումս գոյութիւն ունեցող «դումա»-ն:

Նախիջևանն իւր գիւղերով սկզբից Համարուել է Ազովի
նահանգի առաջ Տագանրոգի գաւառի, յետոյ Ալեքսանդրովսկ
գաւառի քաղաք. յետոյ նա 1834 թուին իւր գիւղերով կազ-
մել է մի առանձին Հայկական շրջան և Համարուել է Կատա-
րինոսլաւ նահանգի Ռոստովի գաւառի քաղաքներից մէկը և,
վերջապէս, 1887 թուին նա մտել է «Դոնի զօրաց երկիր»
կոչուած նահանգի մէջ:

Թէւ Ի սկզբանէ անտի ունեցած և վայելած արտօնու-
թիւններից զրկուելն ընդհանրապէս ազդել է գաղթականների
վերայ և նոքա այս ու այն միջոցին են դիմել պաշտպանելու
Համար իւրեանց կայսերաշնորհ իրաւունքները, բայց այդ ար-
տօնութիւնների և ոչ մէկից զրկուելն այնպէս զգալի չի եղել
նոցա Համար, ինչպէս զինուորագրութիւնից ազատ լինելու ար-
տօնութիւնից զրկուելը: Գաղթականներն այդ վերջին արտօ-
նութիւնը պաշտպանելու Համար չ'շատանալով սովորական պաշ-
տօնական զրազրութեամբ և խնդրագրերով, մինչև անգամ
պատգամաւորութիւն են ուղարկել Պետերբուրգ և լիշեցրել
իրենց շնորհած Ակատարինէ կայսերուհու 1779 թուի Հրովար-
տակի մասին, բայց, Ի Հարկէ, ոչինչ չեն շահել, որովհետեւ
օրէնքն ընդհանուր էր և բացառութիւն չէր կարող լինել մի-
այն Նախիջևանի Հայերի Համար:

«Սալտաթ սաճնելու» ազգեցութիւնը ժողովրդի վերայ այնքան զօրեղ է եղել, որ զաղթականները, որոնք վաղուց արդէն մոռացել են իւրեանց ուրախութիւններն ու վշտերն իւրեանց սեփական երգերով արտայայտել, մասնաւորապէս զինուորագրութեան մասին մի երգ են յօրինել, որի մէջ Հետեւեալ կերպով են արտայայտում իւրեանց զգացմունքը զինուորակոչին ննջեալուած նախիջևանցի Հայ կտրիճները.

Քսան մէկս կոխեցի,

Հօյսս, մօյսս լացուցի.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Զի կար մեծի ազատում:

Տուարի պէս քշեցին,

Օյլարի պէս բարնեցին.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Քսան մէկ էր տարիքս:

Տարին, ստանօք խոթեցին,

Լանքերս, պօյներս չափեցին.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Քսան մէկ էր տարիքս:

Հայի լէքմանս հանեցին,

Սալտաթի շինել հագուցին.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Քսան մէկ էր տարիքս:

Հոսի կօշիկս հանեցին,

Սալտաթի կօշիկ հագուցին.

Հոսի գառուղս հանեցին,

Սալտաթի գառուղս հագուցին.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Քսան մէկ էր տարիքս:

Թուքու պողով ուրիշ հաց,

Եփ պիտ՝ մոռնամ ճերմակ հաց.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Զի կար մեծի ազատում:

Քաղաքացւոց և գիւղացւոց յարաբերութիւնը, ինչպէս ամեն Հայաբնակ տեղ, Նախիջևանում էլ սկզբից սովորական բնաւորութիւնն է կրել, այսինքն քաղաքացիք գիւղացիներին իրենցից ստոր արարած Համարելով, միշտ մի տեսակ արհամարհանք են տածել իւրեանց սրտում դէպի նոցա: Սակայն այդ արհամարհանքը, որ ուրիշ տեղերում միշտ միևնույն չափով է եղել, միևնոյն սահմանի մէջ է պահուել և շատ տեղ էլ արդէն ժամանակի ընթացքում աւելի մեղմացել ու փափկացել է և Համարեմ թէ սիրոյ և բարեկամութեան ու իրաւունքների Հաւասարութեան աստիճանին է Հասել, Նախիջևանում, ընդհակառակը, գնալով աւելի սուր բնաւորութիւն է ստացել և Հեռզհետէ, կարելի է ասել, փոխուել է բացարձակ Հակառակութեան, թշնամութեան և ատելութեան: Դորան նպատեղ է և Նախիջևանի ներքին կառավարութեան ձևը, որ ընդ-

Հանրապետ աղայական լինելով, չի ճանաչել ոչ թէ միայն գիւղացւոց իրաւունքները, այլ և յաճախ արհամարհել է միեւնական դամ և քաղաքի ստորին դասակարգի — աղքատների իրաւունքները: 1779 թուի հրովարտակի հիման վերայ Հաստատուած Մագիստրատն իւր վարչական անձանց ընտրել է քաղաքացիների միջից, ընտրողական իրաւունքը տալով միայն պատուաւոր, նիւթականապէս անկախ մարդկանց, որ ասել է թէ ընտրողական իրաւունքը յատկացրել է աղաներին, որովհետև դժբա են եղել միայն նիւթականապէս ապահովուած անկախ մարդիկը: Հետզհետէ բանն այնտեղ է հասել, որ ընտրողական ժողովներին, որոնց մասնակցելու իրաւունք են ունեցել Հաւասարապէս և՛ քաղաքացիք և՛ գիւղացիք, յաճախ գիւղացիք չեն էլ հրաւիրուել և նոցա այդ «Մոքոցներին» և՛ «եղոտ գլուխներին», ինչպէս կոչուած են նոցա քաղաքացիք, ձայնը և քուէն բանի տեղ էլ ամենևին չի դրուել, շատ անգամ նոցա շահերն էլ ՚ի նկատի չեն առնուել: Գորա հետևանքն էլ այն է եղել, որ զաղթականներին մէջ ժամանակի ընթացքում կազմուել է երկու միմեանց Հակառակ բանակ — քաղաքացւոց և գիւղացւոց, որոնք ձգտելով միմեանց վնասել, միմեանցից վրէժխնդիր լինել, դորանով անգիտակցաբար վնասել են և ընդհանուր շահերին: Առաջ է եկել, օրինակի համար, «Զեմեստվոններին» խնդիրը և յոյս է եղել իրաւունք ստանալու Նախիջևանից և նորա Հայ գիւղերից նահանգական ղեմստվոյի մի առանձին ճիւղ Հաստատուել —, գիւղացիք Հակումն չեն ցոյց տուել և Նախիջևանցիք ստիպուած են եղել միանալու Ռոստովի ղեմստվոյին: Հրատարակուել է ընդհանուր զինուորագրութեան կանոնադրութիւնը և Նախիջևանից և նորա Հայ գիւղերից իշխանութեան կարգադրութեամբ կազմուել է մի զինուորագրական շրջան, բայց գիւղացիք դորանից անբաւական են մնացել և միշտ ձգտում են ցոյց տուել բաժանուելու Նախիջևանից և միանալու Ռոստովի շրջանին, որովհետև կարծել և կարծում են, թէ քաղաքացիք այս կամ այն միջոցներով աշխատում են իւրեանց որդոց ազատել զինուոր դնալուց և գիւղացիներին զինուոր գրել տալ, և այլն և այլն:

Քաղաքացւոց և զիւղացւոց այս թշնամական յարաբերութեան արտայայտութիւնն, այս անհաշտութեան հոգին կրում է իւր մէջ հետեւեալ երգը, որ յօրինել են զիւղացիք, ձգտելով նորա մէջ նկարագրել իւրեանց — զիւղացւոց և քաղաքացւոց կեանքի հակադասութիւնը:

Անփէրիմ նիսիթացիք,

Թօփտեցիք, Չալթըրցիք,

Սուլթան ու Մեհ-Սալացիք,

Ի՜նչ են Նոր-նախիջևանցիք:

Հնչտա, տրդաք, Հնչտա, տրդաք,

Քէֆ անինք մենք, քէֆ անինք:

Խափիշ է մեր տուները՝

Սարալի մենք չենք: Թար.

Նացանը փակ դուռերը,

Մերը հիւ փակ չի լլար:

Հնչտա, տրդաք, Հնչտա, տրդաք,

և այլն:

Մեր գործը օրաօր, հարման,

Պանել ու թօփ անել,

Պալիլ տուն, տուար, հալվան,

Փառք մեզ տալ ու նստիլ:

Հնչտա, տրդաք, Հնչտա, տրդաք,

և այլն:

Մենք չի կտինք ան ֆէնտէրը,

Սիրտերըս պաց. դուռերըս պաց,

Անհոգս է մեր օրերը,

Նացանը տէրա ու լաց:

Հնչտա, տրդաք, Հնչտա, տրդաք,

Քէֆանինք մենք, քէֆ անինք: ¹⁾

Ներկայումս թէև նախկին ատելութիւնն այլ ևս չի երևում երկու հասարակութեան մէջ և մնացել է միայն քաղաքացիների արտաքին ծաղրական և արհամարական յարաբերութիւնը դէպի զիւղացիները, բայց դորա, այդ ատելութեան տեղն այժմ բռնել է անտարբերութիւնը, ամեն բան ոչնչացնող մեռելալին անտարբերութիւնը դէպի միմեանց շահերը: Կարելի է համարենա՞ առանց սխալուելու ասել, որ դժուար է գտնել մի ուրիշ հայ զիւղական և քաղաքային հասարակութիւն, որ այնպէս անտարբեր լինին դէպի միմեանց բարոյական և նիւթական շահերը, որքան Նախիջևանի քաղաքի և զիւղերի հասարակութիւններն են: Կան շատ մարդիկ, որոնք իւրեանց ամբողջ կեանքն անցկացնելով քաղաքում, ոչ մի անգամ նեղութիւն չեն կրել այցելելու իւրեանց քաղաքի շրջակայքում գտնուած հայ զիւղերը, կան շատերը, որոնք այնքան հետաքրքիր չեն եղել իւ-

¹⁾ Այս երգն առաջին անգամ տպագրուել է Ռ. պատկանեանցի երգարանի Բ. տետրակում:

րեանց Համարին գիւղացիների վիճակին ու դրութեան, որ ոչ մի տեղեկութիւն չունին Հայ գիւղերի մասին: Նախիջևանի Բարեգործական ընկերութիւնները Հոգում են միայն իւրեանց կարօտեալների մասին և այդպէս էլ Հէնց կազմել են իւրեանց կանոնադրութիւնները, Հարուստները կտակ են անում միայն քաղաքացւոց Համար, դպրոցներում թոշակներ են Հաստատում միայն քաղաքացւոց Համար, և այլն և այլն: Եւ եթէ քաղաքն իւր Հարուստ անՀատներով, իւր թեմական դպրանոցով, իւր Հարուստ Եկեղեցական Հոգաբարձութեամբ, իւր Հարուստ բարեգործական Հաստատութիւններով, իւր ինտելիգենտ սոուար դասակարգով այդպէս է, 'ի Հարկէ, ինչ կարելի է սպասել ու պահանջել խեղճ, տգէտ, կոշտ ու կոպիտ, Հեռատեսութեան պայմանները չ'Հասկացող, շրջապատող Հանգամանքներին անտեղեակ գիւղացիներէց... գիւղացի աղքատը, կարօտեալը, որքն ու այլին, Հիւանդն ու անկեալը մնում են անխնամ, նոցա մտաւոր լառաջադիմութեան վերայ մտածող չ'կայ, նոցա առաջնորդող, բարի խորհուրդ, խրատ տուող չ'կայ: Մահլայական կռիւները, քահանայական խռովութիւնները, եկեղեցու կամ դպրոցի այս կամ այն թաղում շինուելու անընդհատ վիճաբանութիւնները, անՀաշտ կուսակցութիւնների մրցողութիւնները գրգռելով ռամիկ ամբոխի միայն վատ բնազդումները, ջլատում են գիւղացիների ամենալաւ, ամենաթարմ ոյժերը, սպառում են նոցա մտաւոր ու բարոյական կորուլը և քայքայում նոցա Համայնական կեանքը:

